Font : Arial LatArm

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Հանրակրթություն

Պատկեր 1 Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վիճակագրություն

Մարզում գործող պետական դպրոցների թիվը	Մարզային ենթակայության դպրոցներ						ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության դպրոցներ	
170	154						16	
	Տարրա-կան	Հիմնա-կան	Միջնա-կարգ	Վարժա-րան	Հա-տուկ	Երեկո-յան	Վարժարան	Ավագ
	4	48	97	2	2	1	3	13



Աղյուսակում ներառված չէ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջը»:

Մարզում գործում են 170 պետական հանրակրթական դպրոցներ, որոնցից 158-ը՝ մարզպետարանի, 12-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության: Դպրոցներից 4-ը տարրական են, 30-ը հիմնական, 2-ը՝ հատուկ, 1-ը՝ երեկոյան: Դպրոցներից 9-ն ունեն ավագ դպրոցի 8-ը՝ վարժարանի կարգավիճակ:

Պատկեր 2 Քաղաքային և գյուղական բնակավայրերում գործող դպրոցների և հաճախող երեխաների վիճակագրությունը





Պատկեր 3 2010-2012 թվականների աշակերտների թիվն ըստ ուսումնական տարիների

Ուսումնական տարի	2009-2010	2010-2011	2011-2012 նախնական
Աշակերտների թիվը (մարզային ենթակայության դպրոցներ)	34170	30054	29492
Առաջին դասարանցիների թիվը	3031	3076	3274
Շրջանավարտների թիվը	3573	_	

2010-2011 ուստարում 9 ավագ դպրոցներ՝ 2123 աշակերտներով կրթության նախարարության ենթակայության են:

2011-2012 ուստարում 13 ավագ դպրոցներ՝ 5449 աշակերտներով կրթության նախարարության ենթակայության են:

Դպրոցների և աշակերտների թիվը կազմում էր հանրապետությունում գործող դպրոցների և աշակերտների թվի մոտ 10%-ը:

Դպրոցներից 55-ը (32%-ը) գործում են մարզի 3 քաղաքներում, 115-ը (68%-ը) 112 գյուղերում : Քաղաքային դպրոցներում սովորում էին շուրջ 20500 աշակերտներ (աշակերտների ընդհանուր թվի 56.9%-ը):

Հանրակրթական դպրոցներից 30-ը գործում են բարձր լեռնային, 44-ը՝ լեռնային, 13-ը՝ սահմանամերձ բնակավայրերում:

Երկու հատուկ դպրոցները իրականացնում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար նախատեսված կրթական ծրագրեր : Այդ դպրոցներում ընդգրկված էին 171 երեխաներ:

2011-2012 ուստարվանից Գյումրու N1 ավագ, N 7, N 40, N11 և Արթիկի N 1 հիմնական դպրոցները ընդգրկված են ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկում :

Ոչ պետական 4 հանրակրթական դպրոցներում սովորում էին շուրջ 600 երեխաներ:

2007-2008 ուստարում 1-ին դասարանցիների թիվը 2005-2006 ուստարվա նկատմամբ նվազել էր 738-ով, սակայն 2008 թվականից արձանագրվել է 1-ին դասարանցիների թվի աճ: 2010-2011 ուստարում 1-ին դասարանցիների թիվը կկազմի 3300 (նախնական) : Այն 250-ով ավելի է նախորդ ուսումնական տարվա առաջին դասարանցիների թվից : 2011-2012 ուստարում առաջին դասարանցիների նախնական թիվը 3274 է : Այն 200-ով ավել է նախորդ տարվանից :

Պատկեր 4 2008-2012 թվականների 1-ին դասարանցիների վիճակագրություն



Հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին զուգընթաց վերջին տարիներին արձանագրվել է կրթությանը ուղղված պետական ծախսերի աճ: 2010 թվականին Շիրակի մարզի կրթության ոլորտի բյուջետային ծախսերը 2006 թվականի համեմատ աճել են մոտ 44%-ով:

Պատկեր 5 Հանրակրթական դպրոցների հիմնական ցուցանիշները (2010-2011 ուստարի)

Տարածաշրջանի անվանումը	Դաս. միջին խտությունը	Ուսուցիչների թիվը	Ուսուցչական դրույքների թիվը	Դրույք-ուսուց. հարաբեր.
Գյումրի	21.9	1527	1359.8	0.89
Արթիկ	17.7	805	611.9	0.76
Ախուրյան	15.1	679	563.0	0.82
Ամասիա	7.4	241	189.7	0.79
Աշոցք	9.0	312	240.2	0.77
Անի	14.0	372	297.5	0.79
Ընդամենը	**17**	**3936**	**3262.1**	**0.83**

Պատկեր 6 Դրույք –ուսուցիչ հարաբերությունը ըստ տարածաշրջանների



Պատկեր 7 Դասարանի միջին խտությունը ըստ տարածաշրջանի



Մարզի հանրակրթական դպրոցների դասարանի միջին խտությունը ցածր է հանրապետական միջինից, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նորակառույց դպրոցական շենքերի մի մասը ոչ տիպային են և չունեն համապատասխան չափերի դասասենյակներ և, որ մեծ թիվ են կազմում թերբեռնված գյուղական դպրոցները : Այս ցուցանիշը մարզի քաղաքային դպրոցների համար 21.6 էր, իսկ գյուղական դպրոցների համար 13.3 : Ըստ տարածաշրջանների պատկերը ներկայացված է:

Պատկեր 8 Ուսուցիչների որակական կազմը



Բարձրագույն մանկավարժական կրթություն ունի մանկավարժների 77.5%-ը, բարձրագույն ոչ մանկավարժական՝ 4,1%-ը, միջին մասնագիտական մանկավարժական՝ 15.1%-ը, թերի բարձրագույն 3,3%-ը : Մանկավարժական կրթություն ունեն ուսուցիչների 92.6%-ը : Միայն միջնակարգ կրթությամբ ուսուցիչներ համակարգում չեն աշխատում : Մանկավարժների 80%-ը իգական սեռի են:

Պատկեր 9 Արական և իգական սեռի ուսուցիչների թվի հարաբերությունը



Ավագ դպրոցների ստեղծման ծրագիր

Հանրապետությունում 2008-2009 ուստարվանից ներդրվեց առանձին գործող ավագ դպրոցների ստեղծման ծրագիրը : Ավագ դպրոցների ստեղծման ծրագրի փորձնական փուլում ընդգրկված էին մարզի 4 դպրոցներ: Այս դպրոցները գտնվում են առանձնացված կրթական գոտիներում, որոնց կազմի մեջ մտնող թվով 5 դպրոցները 2008-2009 ուստարվա ավարտին վերակազմակերպվեցին հիմնական դպրոցների, իսկ թվով 4 դպրոցների վերակազմակերպումը արդեն ավարտվում է:

2009-2010 ուսումնական տարվանից Արթիկ քաղաքի 2 միջնակարգ դպրոցները՝ Արթիկի թիվ 3 և Արթիկի թիվ 7 վերակազմակերպվեցին ավագ դպրոցների, իսկ քաղաքի մնացած 6 դպրոցները՝ հիմնականի: Այսպիսով Արթիկ քաղաքում ավարտվեց «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման» ծրագիրը:

Ներկայումս ծրագիրն ավարտված է: Արդյունքում մարզում գործում են 13 ավագ դպրոցներ, որից 10-ը Գյումրիում,1-ը Ախուրյանում, 2-ը՝ Արթիկում :

Կրթության որակական ծեռքբերումներ

Պատկեր 10 Օլիմպիադաների աշակերտների մասնակցությունը

Փուլը	Տարածքային փուլ	Մարզային փուլ	Հանրապետական փուլ
Մասնակիցների թիվը	3198	900	145

Պատկեր 11 Հանրապետական փուլի արդյունքները



Կրթության մատչելիության ապահովում

Միջին և ավագ դպրոցներում կրթության մատչելիությանը էապես նպաստեց նոր ներդրված դպրոցահասակ երեխաների հարևան համայնքների դպրոցներ տեղափոխվելու երթևեկության հատուցման ծրագիրը: Այս նպատակով ՀՀ պետական բյուջեից 2009 և 2010 թվականներին թվով 5 դպրոցների հատկացվել է 10875.0-ական դրամ, որով կազմակերպվել և կազմակերպվում է թվով 156 աշակերտների երթևեկությունը:

Նախադպրոցական կրթություն

Մարզում գործում են 49 նախակրթարաններ, որտեղ հաճախում են 4110 երեխաներ: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների թիվը դեռևս չի գերազանցում նախադպրոցական տարիքի երեխաների թվի 35%-ը: Խնդիրը մասամբ մեղմվեց «Օգնություն նախադպրոցական տարիքի երեխաներին» ծրագրի ներդրումով, որի արդյունքում մարզի գյուղական համայնքների թվով 13 դպրոցներում բացվեցին նախադպրոցական խմբեր:

Մարզի 119 համայնքներից 60-ում չկան համայնքապատկան համապատասխան շենքեր, 30-ում կան շենքեր (հիմնականում անմխիթար վիճակում), սակայն համայնքների ֆինանսական սակավ կարողությունների պատճառով մանկապարտեզներ չեն գործում: Գյուղական համայնքների ղեկավարների հետ համատեղ աշխատանքներ են տարվում նախադպրոցական կրթության կազմակերպման համար պայմաններ ստեղծելու և այն ավելի մատչելի դարձնելու համար :

Շենքային պայմաններ, նյութատեխնիկական բազա:

Վերջին տարիների դպրոցաշինության համալիր ծրագրի արդյունքում էապես բարելավվել է դպրոցական շենքերի վիճակը: Ներկայումս հրատապ հիմնանորոգման կարիք ունեն Հովունու, Կապսի, Արթիկի թիվ 8 դպրոցների շենքերը : Առաջիկա տարիներին հիմնանորոգման անհրաժեշտություն ունեն ևս 31 դպրոցական և մեկ արհեստագործական ուսումնարանի շենքեր: Ընթացքի մեջ են թվով 8 դպրոցական շենքերի հիմնանորոգման աշխատանքները :

Պատկեր 12 Դպրոցական շենքերի վիճակը



Պատկեր 13 Մարզադահլիճների առկայությունը և վիճակը



Վերջին տարիներին էապես բարելավվել է նաև դպրոցական շենքերի ջերմամատակարարումը: Գնալով նվազում է հեղուկ վառելանյութի վառարաններ օգտագործող դպրոցների թիվը, ավելանում են ջերմամատակարարման համակարգով ջեռուցվող շենքերը:

Գազիֆիկացված կաթսայից սնվող ջեռուցում է իրականացվում մարզի 60 հանրակրթական դպրոցների շենքերում (36%): Նախորդ տարվա նկատմամբ այս թիվը աճել է 7-ով: 15 դպրոցների դպրոցական շենքեր ջեռուցվում են դարձյալ լոկալ համակարգով, սակայն, օգտագործում են դիզելային վառելիք: էլեկտրաէներգիայով ջեռուցվող դպրոցների թիվը մարզում 44 է (26%): Հինգ դպրոցական շենքերի ջերմամատակարարման համակարգերի բարելավումը մտած է ծրագիր : Սակայն, դեռևս 42 դպրոցներում ջեռուցումն իրականացվում է հեղուկ վառելանյութի վառարաններով, ինչն իր արդյունավետությամբ, շահագործման հարմարավետությամբ և անվտանգության առումով զգալիորեն զիջում է ջեռուցման վերոհիշյալ ձևերին :

Ուսումնալաբորատոր բազա

Կարևոր խնդիր է հեռահար ուսուցման համակարգի ներդրումը և դպրոցների, քոլեջների, բուհերի էլեկտրոնային ցանցի ընդլայնումը՝ նպատակ հետապնդելով 2012 թվականին ապահովել բոլոր ուսումնական հաստատությունների ընդգրկվածությունը հեռահար ուսուցման համակարգում : Դա, իր հերթին, ենթադրում է հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շարունակում ու զարգացում :

Մարզի դպրոցների համակարգչային սարքավորումներով ապահովվածության միջինը կազմում է 1 համակարգչին՝ 24.5 աշակերտ (հանրապետական միջինը 30.2 է), 2009 թվականին այս ցուցանիշը 1 համակարգչին 30.6 աշակերտ էր (հանրապետական միջինը 40.2 էր) : Ինտերնետին միացված է մարզի հանրակրթական դպրոցներից 97-ը՝ 55.4%: Նախորդ տարվա այս ցուցանիշը 84 էր՝ 47.2 % : Այս հարցում դպրոցներին զգալի աջակցություն է ցուցաբերել Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը (ԿՏԱԿ) :

Նախատեսվում է 2012 թվականի վերջում մարզի հանրակրթական համակարգում մեկ համակարգչից օգտվող աշակերտների միջին թիվը հասցնել 20-ի:

Պատկեր 14 1 համակարգչից օգտվող աշակերտների թիվը ըստ տարիների



Կարևորվում է դպրոցների համակարգչային սարքավորումների, համակարգչային ուսումնական կենտրոնների և Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի (ՀԴԻՑ) հնարավորությունների արդյունավետ օգտագործումը կրթական նպատակներով, այդ թվում նաև դասաժամերից դուրս ուսուցիչների և աշակերտների կողմից ինքնուսուցման նպատակով համակարգիչների ու ինտերնետի օգտագործման հնարավորությունը, դպրոցի էլեկտրոնային գրադարանում առկա ուսումնական ձեռնարկների արդյունավետ կիրառումը ուսումնական գործընթացում, ուսուցիչների կողմից էլեկտրոնային նոր ուսումնամեթոդական նյութերի ստեղծումը :

Պաշտոնական փաստաթղթերը, հրահանգներն ու կարգադրությունները, մասնավորապես միասնական քննությունների և ստուգումների մասին տեղեկատվությունը ժամանակին ստանալու տեսանկյունից չափազանց արդյունավետ է ՀԴԻՑ–ի միջավայրում դպրոցներին տրամադրված էլեկտրոնային փոստի օգտագործումը :

Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրմանն առնչվող հարցերում անհրաժեշտ է համագործակցել ԿՏԱԿ-ի մարզային համակարգողների հետ (անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում, կազմակերպական ու խորհրդատվական փոխադարձ աջակցություն և այլն) :

Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն

Համակարգի կարևոր խնդիրներից է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ուսումնական հաստատություններում համապատասխան պայմանների ստեղծումը:

Այն կլուծվի Գյումրի քաղաքի չորս և Արթիկ քաղաքի մեկ դպրոցներ ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկում ընդգրկելով:

Դասագրքեր

2011-2012 ուսումնական տարվա համար անհրաժեշտ է շուրջ 35500 կտոր տարրական դասարանների դասագրքեր և ուսուցչի ձեռնարկներ, որից մի քանի անուն ներկրված և պահեստավորված է : Ստացված և պահեստավորված է նաև ՀՀ պետական բյուջեի միջոցներով տպագրված ավագ դպրոցի դասագքերի որոշակի քանակ: Բացի 8578 կտոր ավագ դպրոցի դասագքերի, «Դասագրքերի շրջանառու հիմնադրամ» ծրագրի շրջանակներում պատվիրվել է նաև 56832 կտոր, որից որոշակի քանակություն արդեն ստացվել է : Ստացվել և պահեստավորվել են նաև պաստառներ, քարտեզներ և ուսումնաօժանդակ գրականություն :

Ակնկալվում է, որ դասագրքրերի անհրաժեշտ ամբողջ քանակը կներկրվի մինչև սեպտեմբերի 1-ը: Դասագրքերի բաշխումը դպրոցներին կիրականացվի օգոստոսի 27-ից մինչև սեպտեմբերի 8-ը :